ՄԵԼԱՆՅԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԲԱԼԱՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ,
ԱՀ ԿԳՄ նախարարություն
melanyabalayan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

1920 ԹՎԱԿԱՆԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՇՈՒՇԻՈՒՄ

1836թ. ռուսական կայսրության հայտնի կանոնադրությամբ Շուշին ճանաչվել էր Ղարաբաղի հոգևոր կենտրոն, որտեղ էլ տեղակայվել էր առաջնորդարանը: Լեոյի բնորոշմամբ՝ «Շուշին դառնում էր հոգևոր կենտրոն այն հայության համար, որ ապրում էր երեք քաղաքներում (Շուշի, Նուխի, Լենքորան) և դրանց վերաբերուող գաւառներում»[1]:

Այս իրողությունը ինքնին նոր հնարավորություն էր Շուշիի հոգևոր կյանքի վերընթացի, ինչն էլ անվերապահորեն կատարվեց:

Շուշիի հայաբնակ թաղամասերից յուրաքանչյուրը ունեցել է իր հոգևոր կենտրոնը՝ եկեղեցին: XIX դարասկզբից մինչև 1920թ. այստեղ կառուցվել և ակնառու հոգևոր գործունեություն են իրականացրել Ագուլեցոց Ս.Աստվածածին, Մեղրեցոց Ս.Աստվածածին, Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ, Վերին Թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ կամ Ղարաբաղցոց, Ներքին Թաղի Ս.Աստվածածին, Կուսանաց Ս.Աստվածածին եկեղեցիները:

Ագուլեցոց Ս.Աստվածածին եկեղեցու մասին առաջին տեղեկությունները վերաբերում են 1785թ.[2], իսկ 1822թ. եկեղեցին պարզապես վերակառուցվել է և հայտնի էր որպես «…զհոյակապ նորաշէն տաճարս յանուն սբ. Աստվածածնի»[3]:

Մեղրեցոց Ս.Աստվածածին եկեղեցու մասին մեզ հայտնի առաջին հիշատակությունը վերաբերում է 1708թ.[4]: Եկեղեցին վերակառուցվել է 1832թ., այնուհետև 1906թ. հիմնովին վերանորոգվել էր:

---

[1] Լէօ 1914, էջ 124:
[2] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 616, թ. 24:
[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2626, թ. 8:
[4] Թօփճեան Յ. 1895, 45:

Շուշիի արևելյան Ներքին թաղում գործում էր Ս.Աստվածածին եկեղեցին: Սակայն թաղամասում թուրքերի աստիճանական ներթափանցման հետևանքով հայերը ստիպված տեղափոխվեցին Վերին թաղամաս, որտեղ էլ 1847թ. կառուցեցին Ս.Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (Կանաչ ժամը): 1844-1858թթ. կառուցվեց Շուշիի ամենամեծ հոգևոր կենտրոնը համարվող Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ մայր տաճարը:

1838թ. բացվեց Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցը: Թեմական դպրոցի բացումը և արդյունավետ գործունեությունը, հոգևոր մյուս դպրոցների հետ միասին, ևս իրենց նպաստը բերեցին Շուշիում և ողջ Ղարաբաղում հոգևոր-մշակութային կյանքի աննախադեպ վերընթացին:

Սակայն 1918-20թթ. տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները միանգամայն այլ ընթացք հաղորդեցին Հայ առաքելական եկեղեցու, մասնավորապես Արցախի թեմի գործունեության ու, վերջին հաշվով՝ գոյության առումով:

Դեռևս 1918 թվականից Ադրբեջանը կանոնավոր զորամասեր էր կենտրոնացրել Ղարաբաղի սահմանին և պարբերաբար հարձակումներ էր գործում՝ նպատակ ունենալով նվաճել այն: Ղարաբաղը հայտնվել էր շրջափակման մեջ:

1918թ. Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը նամակ է ուղարկել Մայր Աթոռ, որում մանրամասն ներկայացրել է թուրքական հարձակումների հետևանքով ստեղծված կացությունը, եկեղեցիների ու վանքերի բացահայտ կողոպուտը, թալանն ու ավերածությունները. «Տաճկա-ադրբէջանական արշաւանքը մեր վիճակում աւերել է 35-ի չափ հայ գիւղեր, որոնց 11-ը Վարանդայի և Խաչէնի գաւառածայրերից են: ...Ժողովրդի մի մասը կոտորած, եկեղեցիները նոյնպէս կողոպտուած»[1]:

1919թ. մայիսի 20-ից, ինչպես Համլետ Հարությունյանն է գրել. «Ղարաբաղի հայության զանգվածային կոտորածի սկիզբը դրվեց»[2]: 1919թ. հունիսին Ղարաբաղում տեղի ունեցած կոտորածների կապակցությամբ արդեն իսկ իր ձայնը հնչեցրեց նաև Ամենայն հայոց Գևորգ 5-րդ կաթողիկոսը: Թիֆլիսում գտնվող անգլիական գեներալ Կորիին ուղղված հեռագրում վեհափառ հայրապետը խնդրում էր պաշտպան կանգնել Ղարաբաղի հայությանը, որը գտնվում էր նոր ջարդերի վտանգի առաջ[3]:

1920թ. Շուշիում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը թերևս դարձավ ամենաողբերգական իրադարձությունը Ղարաբաղի հոգևոր մշակութային կենտրոնի համար: Ցեղասպանության հետևանքով մեծապես տուժեց նաև Հայ առաքելական եկեղեցու Ղարաբաղի հոգևոր թեմը: Ժամանակակցի վկայությամբ «Շուշին միակ շաղկապն էր 300.000 հայ բնակչութեան, և ներկայումս երբ չկայ այդ քաղաքը, չկայ ուրեմն նաև հոգևոր և կրթական կենտրոն ահագին բնակչութեան համար, չկայ մարմնի սիրտը, չկայ Ղարաբաղին և Զանգեզուրին մտաւոր կեանքին մատակարարողը: Ղարաբաղին հասցված հարվածը

---

[1] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.) 2001, 662-663:

[2] Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները (1919 թ. Հունիս և 1920թ. մարտ), էջ 52: http://armstudies.asj-oa.am/68/1/50.pdf

[3] «Ժողովուրդ» 1919, 22 հունիսի; «Ազգ» 1919, Բոստոն, 2 սեպտեմբերի:

խիստ անգութ էր և անփոխարինելի»[1]: Իրավամբ, Շուշին հոգևոր-մշակութային ու կրթական կենտրոն էր ոչ միայն Ղարաբաղի, այլև հոգևոր թեմի մեջ ներառված ավելի ընդարձակ տարածքների՝ Զանգեզուրի համար: Հետևաբար, ինչպես պահպանված վավերագիրն է վկայում՝ «հասցված հարվածը անգութ էր»:

Հոգևորականության և եկեղեցու դեմ իրականացված բռնությունների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ ինչպես ժամանակակիցների թողած վկայություններում, այնպես էլ Հայ եկեղեցու վավերագրերում:

Շուշիում տեղի ունեցած կոտորածների և մասնավորաբար հոգևորականության նկատմամբ կատարած բռնարարքների նկարագրությամբ կոնսիստորիայի անդամ Կարապետ քահանա Վարդապետյանցը հատուկ զեկուցագիր է ուղարկել Ամենայն հայոց կաթողիկոսին՝ միաժամանակ խնդրելով թեմի նոր կառավարիչ նշանակել. «Տարւոյս մարտի 10, 23-ին Շուշում սկսած կռիվները խաչ դրին քաղաքի հայկական թաղի վրայ: Այրւեց հայոց ամբողջ քաղաքամասը… Վահան եպիսկոպոսը սպանւեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանւած են, ապա այրւած: Կռիվը սկսւելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս և եկեղեցիներից»[2]: Վերոնշյալը փաստացի վկայություն է նաև եկեղեցում պահպանվող արժեքավոր փաստաթղթերի ու եկեղեցական այլ մասունքների կորստի մասին: Նույն վավերագիրը հաղորդում է նաև, որ «Վահան եպիսկոպոսի սպանութեան մասին մեզանից յետոյ դուրս եկած հայ ոստիկանապետ Աւետիք Տէր-Ղուկասեանը պատմում է, որ նոյն օրը երեկոյեան ժամը 10-ին ինքը կարողացել է մտնել Սրբազանի մօտ և յայտնել, թէ այլևս հնար չկայ մնալու, պէտք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մօտ: Սրբազանը պատասխանել է, թէ առաջնորդարան և կոնսիստորիա չեմ թողնիլ և չդուրս գալ և վստահ, որ թուրքերն իրան ձեռք չեն տալ, յամառում է ու նստում…»[3]:

Ըստ նույն վավերագրի. «Կոնսիստորիայի կողմից սպանւած են՝ անդամ Խորեն ա.քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տէր-Դանիէլեանը և դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանւած է Յարութիւն ա.քահ. Վարդապէտեանը …: Այսպէս ահա չկայ հոգևոր վարչութիւն և մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր»[4]:

Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված հատուկ գրության մեջ, իր մտահոգությունն արտահայտելով թուրքերի կողմից Շուշիի գրավման մասին, նշել է. « … տարւոյս ապրիլի 6-ին, թուրքերը, վերցնելով Շուշին, աւերել եւ ոչնչացրել են քաղաքի հայկական մասը, կոտորելով առանց սեռի և հասակի խտրութեան մօտ 5000 հայ, որոնց թւում թեմական առաջնորդ տ. Վահան սրբազան եպիսկոպոսին, որի գլուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես գազանացած խուժանի: Սպանուած են և բոլոր քահանաները, բացառութեամբ տ. Գաբրիէլ քահանայ տ. Յով-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 3:
[2] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 747:
[3] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 747:
[4] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 747:

հաննիսեանի, որը բանտից փախչելով՝ մահուանից ազատվել է: Շուշիի մնացած հայ բնակչութիւնը, մօտաւորապէս 6000 հոգի, քաղաքից հեռանալով գիւղերը, ազատուել են կոտորածից: Շուշիի հետ մենք ներկայումս հաղորդակցութիւն չունենք»[1]:

Հիրավի, գազանության ակնհայտ դրսևորում, որ թուրքի կողմից արդեն իսկ թե անսպասելի և թե եզակի չէր[2]: Շուշիում հայերի նկատմամբ իրականացված սպանդի մասին հոգեցունց վկայություններ է պարունակում նույն օրերին Շուշիում գտնված Զարեհ Մելիք-Շահնազարյանի «Ղարաբաղցի զինվորի գրությունները» հուշագրությունը, որում ներառված են թե հեղինակի և թե այլ շուշեցիների դժնդակ օրերի հուշերը: «Շուշիի սպանդից չորս օր անց հանդիպեցինք գեղեցկուհի, սակայն կիսախելագարված Տաթևիկ Տեր-Սահակյանցին, որը հրաշքով էր փրկվել սպանդից և սարսափով պատմում էր թուրք ոճրագործների գազանությունների մասին, նշելով. «հայ գերիներին հերթով բերում էին սուր դանակը ձեռքին թուրք դահճի մոտ: Առաջինը բերում են ձեռքերը մեջքին կապած, ոտքերը երկաթներով շղթայված գեղեցկահասակ, երկարամիրուք քահանա Տեր-Հարությունին և սուր դանակով գլխատում: Այնուհետև քահանայի գլուխը ցից են հանում ու տանում քաղաքի թուրքական թաղամասի փողոցներով ի ցույց բոլորի»[3]:

Թիֆլիսում հրատարակվող «Սլովո» ռուսալեզու թերթը նույն 1920թ. ապրիլի 16-ին գրել է. «քաղաքի հայկական թաղամասում քարը քարի վրա չի մնացել»:

1886 թվականից Կուսանաց Ս.Աստվածածին եկեղեցու մայրապետն էր Վարվառա Բահաթրյանցը: 1920թ. հայերի ջարդերի ժամանակ Կուսանաց անապատից փրկվել են միայն Հռիփսիմե մայրապետն ու Նունե Սարգսյանը, որոնք ապաստանել են Աշխաբադում[4]: Վերջինս նույնպես որոշ հուշագրություններ է թողել 1920թ. իրադարձությունների մասին[5]:

Ի դեպ, ժամանակակիցների վկայությունների շարքում կարևոր տեղ ունեն նաև կոտորածին մասնակցած թուրք զինվորների ու կամավորների նամակները: Բաքվի իրենց հարազատներին ուղարկված գրություններում նրանք անթաքույց հպարտությամբ են նկարագրել Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերն ու մահմեդականների կատարած աննախադեպ թալանը: Այսպես՝ ջարդերի մասնակից թուրք սպա Իսմայիլ Ալիմարդանբեկովը Շուշիից Բաքվում ապրող իր եղբորը հղված նամակում գրել է. «… Տեսածդ Էրմանիստանը (խոսքը Շուշիի հայկական թաղամասին է վերաբերում. - Մ.Բ.) հիմնովին վառված է, հինգ կամ տասը տուն պահեցինք: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցինք, մինչև անգամ ավետարանը, խալիֆին (Վահան եպիսկոպոսին) …»[6]: Փաստերը բազմաթիվ են ու խոսուն:

1920թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձությունների հետևանքով Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև հայ հոգևոր-պաշտամուն-

---

[1] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 749:
[2] Բալայան Մ. 2009, 207:
[3] Мелик-Шахназаров З. 1995, 40-41.
[4] Բալայան Վ. 2017, 279:
[5] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2722, թ. 7-8:
[6] Բալայան Վ. 2017, 445:

քային ճարտարապետության կարևորագույն կոթողները՝ եկեղեցիները:

Ագուլեցոց եկեղեցին թուրքերը հրկիզել էին դեռևս 1905թ. հայ-թաթարական ջարդերի ժամանակ: Սակայն եկեղեցին կիսավեր պահպանվել է մինչև 1972թ.: Խորհրդային ժամանակներում թուրքերը հիմնահատակ քանդել և տեղում կառուցել են թուրքական դպրոց[1], իսկ եկեղեցու կառուցման մասին արձանագրությամբ ճակատային քարը վերջերս գտնվել է Շուշիի հայկական գերեզմանատանը:

1920թ. Մեղրեցոց Ս.Աստվածածին եկեղեցին ևս հրկիզվեց: Նրանից պահպանվել են եկեղեցու կիսավեր պատերի որոշ մնացորդներ:

1920թ. մարտի 23-ին Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը, Մեղրեցոց եկեղեցուն կից գործող ծխական դպրոցի երկհարկանի շենքը, Վերին թաղի կամ Կանաչ ժամի և Ագուլեցոց եկեղեցական ծխական դպրոցների շենքերը: Գանձակից Լևոն վարդապետը 1920թ. ապրիլի 21-ի գրությամբ հետևյալն է հաղորդել. «Ղարաբաղից ստացուած տեղեկութիւնները արդէն աներկբայօրէն ասում են Շուշու հայկական մասի աւերածութիւն, հայ բնակչութեան կոտորածը, որի ժամանակ սպանուել են Վահան Սրբազանը և քահանաները: Եւ ինչպէս պատմում են ռուս բժիշկ, ինտելիկենդ ռուսներ, բարեացակամ զինուորական թուրքեր, այդ աւերածութիւնը և կոտորածը ամենասոսկալիներից են, որոնց ենթարկուել են և շրջակայ հայ գիւղերը: … մինչև իսկ մի ռուս պաշտօնեայ ինձ յանձնեց մի բանալի, ըստ երևույթին եկեղեցու, որը նա գտել է Հայոց մասում և տեսել մի հայ քահանայի դիակ՝ ի շարս այլ սպանուածների»[2]:

1918-20թթ. աննախադեպ բռնությունները պատճառ հանդիսացան Շուշիում ազգային ու հոգևոր կյանքի ընդհանուր անկման: Ակնհայտ փաստ է, որ ցանկացած ժողովրդական շարժում կամ պատերազմ ունի իր ծնող պատճառները, և դրանց հիմնավոր լուծումը մեծապես կախված է համակողմանի վերլուծությունից ու ճիշտ ընկալումից: Արցախյան հիմնախնդրի լուծման պարագայում թերևս ճիշտ կողմնորոշվելը այնքան էլ դժվար չէ, քանզի ինչպես պատմական փաստերը, այնպես էլ մարդկային քաղաքակրթության ներկա ժամանակներում տեղի ունեցող իրադարձությունները ավելի քան ակնառու են և մատնանշում են միայն մեկ ճանապարհ, որ կոչվում է. «Ազգային միասնությամբ դեպի նոր վերածնունդ ու հզոր ազգային պետականություն» գաղափարը:

Եզրակացություն

XIX դարի սկզբներից Շուշիում և ողջ Ղարաբաղում հոգևոր-մշակութային կյանքը աննախադեպ վերընթաց ապրեց: Շուշիի հայաբնակ թաղամասերից յուրաքանչյուրը ունեցավ իր հոգևոր կենտրոնը՝ եկեղեցին:

1918-20թթ. բռնությունները պատճառ հանդիսացան Շուշիում ազգային ու հոգևոր-մշակութային կյանքի ընդհանուր անկման:

1920թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձությունների հետևանքով զոհվեցին Ղարաբաղի հայոց հոգևոր թեմի առաջնորդը և Շուշիի հոգևորականության

[1] Բալայան Վ. 2017, 281:
[2] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 744-745:

մեծ մասը: Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև եկեղեցիները, դպրոցները:

Թուրքերի կողմից Շուշիում 1920թ. մարտի 23-ին հայերի նկատմամբ իրականացված ջարդերը կրել են ընդծված քաղաքական, կրոնական ու մշակութային նպատակներ:

Հոգևորականության և եկեղեցու դեմ իրականացված բռնությունների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ ինչպես ժամանակակիցների թողած վկայություններում, այնպես էլ Հայ եկեղեցու վավերագրերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, ֆ. 332, g. 1, գ. 616, թ. 24:
2. ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 2626, թ. 8:
3. ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 2722, թ. 7-8:
4. ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1, էջ 3:
5. Ազգ, Բոստոն, 1919, 2 սեպտեմբերի:
6. Բալայան Մ. 2009, Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, Վաչագան Բարեպաշտ, 240 էջ:
7. Բալայան Վ. 2017, Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, Զանգակ, 560 էջ, 32 էջ ներդիր:
8. Թօփճեան Յ. 1895, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա., Վաղարշապատ, 112 էջ:
9. Ժողովուրդ 1919, 22 հունիսի:
10. Լէօ 1914, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, հրատ. Նոյն դպրոցի հոգաբարձութեան, տպարան Ն.Աղանեանի, Պոլից. 7, 692 էջ:
11. Հարությունյան Հ. 2015, Շուշիի հայության կոտորածները (1919թ. հունիս և 1920թ. մարտ), էջ 50-69: http://armstudies.asj-oa.am/68/1/50.pdf
12. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, գիրք Թ., Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), կազմեց և առաջաբանը գրեց Սանդրօ Բեհբուդեանը, Երևան, Ոսկան Երեւանցի, 980 էջ:
13. Мелик-Шахназаров З. 1995, Записки Карабахского солдата (воспоминания участника событий 1918-1920гг. в Нагорном Карабахе), Москва, Шварц, 79 с.

Ամփոփում

1920 թվականի բռնությունները Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ Շուշիում

Մելանյա Բալայան

XIX դարի սկզբներից Շուշիում և ողջ Ղարաբաղում հոգևոր-մշակութային կյանքը աննախադեպ վերընթաց ապրեց: Սակայն 1918-20թթ. բռնությունները պատճառ հանդիսացան Շուշիում ազգային ու հոգևոր-մշակութային կյանքի ընդհանուր անկման: 1920թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձությունների հետևանքով զոհվեց հոգևորականության մեծ մասը, որոնց թվում էր Ղարաբաղի հայոց հոգևոր թեմի առաջնորդը: Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև հայ հոգևոր ճարտարապետության կարևորագույն կոթողներ հանդիսացող եկեղեցիները: Հոգևորականության և եկեղեցու դեմ իրականացված բռնությունների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ ինչպես ժամանակակիցների թողած վկայություններում, այնպես էլ Հայ եկեղեցու վավերագրերում:

Հիմնաբառեր. *Ղարաբաղ, եպիսկոպոս, հոգևորականություն, եկեղեցի, առաքելական, ծիսական, քաղաքականություն, Շուշի:*

Резюме

Насилие в отношении Армянской Апостольской Церкви в Шуши в 1920 году

Меланя Балаян

С начала XIX века национально-духовная и культурная жизнь переживала беспрецедентный рост как в г. Шуши, так и во всем Карабахе. Однако, политические события в 1918-20гг. привели к общему спаду национальной и культурной жизни города Шуши. В результате трагических событий 23 марта 1920г. большинство армянских священнослужителей были убиты, в их числе глава Епархии Армянской Апостольской церкви Карабаха. Вместе с армянским кварталом г. Шуши были подожжены церкви, которые являются важными памятниками армянской архитектуры. Сохранились многочисленные свидетельства о вандализме и насилии, которые были организованы в отношении Армянской Апостольской церкви и духовенства Карабаха, как в воспоминаниях современников-очевидцев, так и в документах Армянской церкви.

Ключевые слова: *Карабах, епископ, духовенства, церковь, апостольский, политика, Шуши.*

Abstract

Violence against the Armenian Apostolic Church in Shushi in 1920

Melanya Balayan

At the beginning of the XIX century the cultural-religious life in Shushi and in the whole territory of Karabakh has been incredibly flourished. However, the violence of 1918-1920 led to a complete decline in national, cultural and religious life in Shushi. As a result of tragic events of March 23, 1920, the majority of Armenian clergy and religious leaders were killed or beheaded; among them was the Primate of the Diocese of Artsakh of the Armenian Apostolic Church. Together with the Armenian district of Shushi, the churches which are considered to be the valuable monuments of Armenian religious architecture were set on fire. Numerous testimonies of violence against the clergy have been preserved both in the testimonies of contemporaries and in the documents of the Armenian Apostolic church.

Keywords: *Karabakh, Bishop, clergy, church, Apostolic, parish, politics, Shushi.*